Հավելված թիվ 2՝
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
01.02.2023թ. թիվ 34-Լ որոշման

ՊԱՀԱՆՋ

(կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին)

«14»02.2025թ. Կարգապահական գործ № ԿԳ-25008

Փաստաբան՝ Վարսիկ Ավետիսյան
(արտոնագիր թիվ 315)

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** նախագահի 09.01.2025թ. թիվ 11-Ա/ԿԳ-25008 որոշմամբ փաստաբան **Վարսիկ Ավետիսյանի (այսուհետ՝ Փաստաբան)** նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

Կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ առաջարկվում է ***սույն գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել*** կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Մասնավորապես, սույն գործի շրջանակներում Փաստաբանի վարքագծում Օրենքի, ինչպես նաև Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշների առկայության կամ բացակայության հանգամանքը հիմնավորելու նպատակով **անհրաժեշտ է ներկայացնել դիրքորոշում (բացատրություն), ինչպես նաև այն հիմնավորող ապացույցներ (առկայության դեպքում):**

Ծանուցում՝ «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ *սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելը կարող է մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:*

Պալատի խորհրդի կողմից 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշման հավելվածի 47-րդ կետի համաձայն՝ *նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ* ***առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է, եթե նա գրավոր դիմում*** *(այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով)* ***է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին՝ պարտավորվելով*** *հաշվետու կիսամյակում* ***չանցած*** *նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների ժամերն անցնել հաջորդ կիսամյակում և եթե նա չի օգտվել Կարգի (սույն հավելվածի) 46-րդ կետով նախատեսված հնարավորությունից:*

Կից՝ *Կողմերի իրավունքների պարզաբանման թերթիկի պատճենը:*

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմի սպասարկող
անձնակազմի աշխատակից՝ _____ Գարիկ Հախնազարյան

Կողմերի իրավունքների պարզաբանման թերթիկ

«Փաստաբանության մասին» օրենքի 39.4. հոդվածի համաձայն՝

1. Փաստաբանը և հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձը (մարմինը) սույն օրենքով սահմանված կարգով հավասար իրավունք ունեն՝

1) մասնակցելու կարգապահական վարույթի բոլոր փուլերին ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով.

2) կարգապահական վարույթի հարուցման պահից ծանոթանալու կարգապահական գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանելու և գործից
դուրս գրելու ցանկացած ծավալի որևէ տեղեկություն.

3) տալու բացատրություններ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց.

4) ներկայացնելու ապացույցներ կարգապահական գործին կցելու և հետազոտելու համար.

5) հայտնելու բացարկներ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի կամ խորհրդի անդամներին և սույն օրենքի 39.5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով սպասարկող անձնակազմի աշխատակցին.

6) հարուցելու միջնորդություններ.

7) հրավիրելու վկաներ, հարցեր տալու ինչպես իր, այնպես էլ մյուս կողմի կամ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի հրավիրած վկաներին.

8) հարցեր տալու ելույթ ունեցողին.

9) հանդես գալու եզրափակիչ ելույթով.

10) ստանալու փաստաբանների կարգապահական հանձնաժողովի և փաստաբանների պալատի խորհրդի որոշումները.

11) փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը բողոքարկելու փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով, իսկ փաստաբանների պալատի խորհրդի որոշումը՝ դատական կարգով: